



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաստատված է՝
ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի 17.11.2017թ. թիվ 22/12-Լ
որոշմամբ

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 20-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Փաստաբանի վարքագծի քննարկման տեսակետից՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետի կիրառման նպատակով,
ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով՝
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼԸ՝

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետի համաձայն՝ **փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա, ինչպես նաև եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը:**

Այս նորմը փաստաբանի՝ իրավաբանական օգնություն ցույց տալը բացառող վարքագծի կանոն է:

Սույն պարզաբանումը տրվում է իրավական ակտի մեկնաբանման համար նախատեսված կանոնով, այն է՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Տվյալ դեպքում, անհրաժեշտ է պարզել, թե ի՞նչ շահ է փորձում պաշտպանել վերոնշյալ արգելող կանոնը:

Ելնելով այդ կանոնի մեջ թվարկված սուբյեկտների կազմից, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն արձանագրում է, որ օրենսդիրը փորձել է փաստաբանի վստահորդին՝

- պաշտպանել փաստաբանի հնարավոր շահագրգիռ գործողություններից, որը կարող էր ծագել այդ գործով վերջինիս մասնակցության փաստով (օրինակ՝ մասնակցել է, որպես վկա, տուժող կամ դատավոր և ունի իր հստակ դիրքորոշումը, ինչպես նաև խնդրի ուղղությունը նույն կերպ առաջ տանելու շարժառիթը),

- չօժտել անհիմն արտոնությամբ՝ մյուս կողմի (հակառակորդի) համեմատությամբ (օրինակ՝ որպես այդ գործով որոշում կայացնող սուբյեկտ տեղյակ է այդ գործի մանրամասներին):

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ կետի վերջին պարբերության համաձայն՝ ***եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է, ինչպես նաև բառերով բաժանված պայմաններով, ապա ինչպես նաև բառերից հեջո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հեջ չկապված պայմաններ:***

Նույն օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***իրավական ակտում պեյք է պահպանվեն հայոց լեզվի կանոնները:***

Վկայակոչված Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը հայոց լեզվի տեսանկյունից հանդիսանում է բարդ ստորադասական նախադասություն, որում գլխավոր նախադասությանը ստորադասված են համարժեք երկրորդական նախադասություններ:

Գլխավոր նախադասությունն է՝ - Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու:

Երկրորդական ստորադասական նախադասություններն են՝

ա. տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա,

բ. եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը:

«Ինչպես նաև» շաղկապը առանձնացնում է առաջին ստորադասական նախադասությունը երկրորդից՝ չկապելով մեկը մյուսի հետ:

Արդյունքում վկայակոչված նորմը հնարավոր է կիրառել երկու դեպքում, դրանք են՝

1. Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու, եթե տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա.
2. Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու, եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը:

Այս համատեքստում, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը գտնում է, որ նշված առաջին նախադասության մեջ **«տվյալ գործին»** բառակապակցությունը՝ տառացի նշանակությամբ վերաբերում է **«մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող,**

փորձագետ, տուժող կամ վկա, կոնկրետ գործին» պայմանին և այս պայմանի մեջ թվարկված սուբյեկտներին է արգելում ՆՈՒՅՆ գործով հետազայում, որպես փաստաբան հանդես գալ: Հետևաբար, «տվյալ գործ» բառակապակցությունը ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը համարում է, որպես անհատական հատկանիշներով որոշված «նույն գործ»-ը:

Թե՛ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները հաշվի առնելով և թե՛ հայոց լեզվի քերականության տեսանկյունից իրավական նորմը մեկնաբանելու դեպքում, ակնհայտ է, որ «տվյալ գործ» եզրույթը վերաբերում է միայն դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա հանդես գալու դեպքերին, իսկ «ինչպես նաև» շաղկապից հետո շարադրված նախադասությունը նման եզրույթ չի օգտագործում:

Հետևաբար, «ինչպես նաև» շաղկապից հետո կիրառված նախադասությունն ինքնավար է:

Օրենսդիրը որոշում կայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին արգելել է հետազայում հանդես գալ փաստաբանի կարգավիճակով, քանի որ վերջինս կարող է անբարեխիղճ արտոնություն տալ իր վստահորդին՝ գործի մանրամասներից տեղեկացված լինելու ուժով:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը միաժամանակ գտնում է, որ «**ինչպես նաև**» շաղկապից հետո կիրառված նախադասությունը չի կարելի այնքան լայն մեկնաբանել, որ փաստաբանը զրկվի քաղաքացուն ընդհանրապես պաշտպանելու իրավունքից, եթե նախկինում որպես պաշտոնատար անձ նրա վերաբերյալ որոշում է կայացրել: Օրինակ, եթե փաստաբանը նախկինում հանդիսացել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարող և կատարողական վարույթի կողմերից մեկի վերաբերյալ նախկինում կայացրել է որոշում, ապա նա այդ վարույթի կողմերից որևէ մեկին, որպես փաստաբան հետազայում կարող է իրավաբանական օգնություն ցույց տալ, բացառությամբ այն դեպքի, երբ իրավաբանական օգնության առարկան առնչվում է այն նույն խնդրին, որի վերաբերյալ նախկին հարկադիր կատարողը որոշում կայացնելու լիազորություն է ունեցել:

Հետևաբար, այս կանոնի արգելքը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ նախկին պաշտոնատար անձ հանդիսացած փաստաբանը իրավաբանական օգնություն է ցույց տալիս այն հարցով, որին նա նախկինում առնչվել է կամ կարող էր առնչվել, որպես պաշտոնատար անձ:

Ամփոփելով վերոգրյալը, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը պարզաբանում է՝

1. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը բաղկացած է ինքնուրույն գործող երկու արգելող կանոնից:
2. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի առաջին կանոնի համաձայն՝ **փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ տվյալ (նույն) գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա:**

3. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի երկրորդ կանոնի համաձայն՝ **փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ (դատավոր, քննիչ, հետաքննիչ և այլն), որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը: Այս կանոնի արգելքը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ նախկին պաշտոնատար անձ հանդիսացած փաստաբանը իրավաբանական օգնություն է ցույց տալիս այն հարցով, որին նա նախկինում առնչվել է կամ կարող էր առնչվել, որպես պաշտոնատար անձ:**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**17 նոյեմբեր 2017թ.
թիվ 22/12-L
ք. Երևան**